ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» Դեկտեմբեր 2022 թվականի N 82-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 93-Լ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 134-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի N 93-Լ և 2020 թվականի հուլիսի 30-ի N 134-Լ հրապարակված որոշումների (այսուհետ՝ N 93-Լ որոշում և N 134-Լ որոշում) մեջ հայտնաբերված վրիպակի արդյունքում կատարել հետևյալ ուղղումը և օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխանեցնելու հիմքով N 93-Լ որոշման հավելվածներ 1 և 2-ում՝ փոփոխությունը.

1) N 93-Լ որոշման հավելվածներ 1,2,3,4,5,6-ի 1-ին էջերի վերևի աջ անկյունում և N 134-Լ որոշման վերնագրում և տեքստում կատարել ուղղում՝ «մարտի» բառը կարդալ «մայիսի» և կատարել նշում՝ ուղղում կատարած լինելու վերաբերյալ,

2) N 93-Լ որոշման հավելված 1-ի և հավելված 2-ի ամբողջ տեքստում «հավելված» բառը և դրա հոլովաձևը փոխարինել «ձև» բառով և դրան համապատասխան հոլովաձևով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ